ՀՖՖ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2021թ. խմբագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

Հոդված 1. Հապավումները և հասկացությունները 4

Հոդված 2. Կիրառման շրջանակը 6

Հոդված 3. Նպատակը 7

Հոդված 4. Անվտանգության հարցերով պատասխանատուի նշանակումը 7

Հոդված 5. Ֆան-ակումբների հետ հարաբերությունները 8

ՄԱՍ II - ԽԱՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 9

Գլուխ 1. Համագործակցությունը 9

Հոդված 6. Պետական մարմինների հետ համագործակցելու պարտավորությունը 9

Հոդված 7. Ապահովության և անվտանգության համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը 9

Հոդված 8. Անվտանգության աշխատակիցները 9

Հոդված 9. Հանդիսատեսի տարանջատումը և ամբոխի ցրման ռազմավարությունը 13

Հոդված 10. Մարզադաշտի ստուգումը 13

Հոդված 11. Հանդիսատեսի համար առաջին օգնությունը 14

Գլուխ 2. Տոմսերը 14

Հոդված 12. Տոմսերի վաճառքը 14

Հոդված 13. Տոմսերի բաշխումը 15

Հոդված 14. Տոմսերի բաշխման ռազմավարությունը 15

Հոդված 15. Սև շուկան և հակակեղծիքային միջոցները 16

Հոդված 16. Տոմսերի քվոտաները և գները 16

Հոդված 17. Տոմսերի մասին տեղեկությունը 17

Գլուխ 3. Հյուր թիմը և երկրպագուները 17

Հոդված 18. Հյուր թիմի անվտանգությունը 17

Հոդված 19. Հյուր երկրպագուների ճամփորդությունը 18

ՄԱՍ III - ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՄՈՒՏՔԸ ՄԱՐԶԱԴԱՇՏ 19

Հոդված 20. Մարզադաշտի ստուգումը և վերահսկումը 19

Հոդված 21. Հանդիսատեսի տարանջատումը 19
Հոդված 22. Տեղեկատվությունը հանդիսատեսի համար 19
Հոդված 23. Մարզադաշտի դարպասների բացումը հանդիսատեսի համար....20
Հոդված 24. Անվտանգության աշխատակիցները 20
Հոդված 25. Հանդիսատեսի ստուգումը և խուզարկումը 21
Հոդված 26. Հանդիսատեսի աջակցության կարգը և նրա կողմից մարզադաշտ բերվող երկրպագման թույլատրելի պարագաները 21
Հոդված 27. Հանդիսատեսի պարտականությունները 25
Հոդված 28. Հանդիսատեսին արգելվում է....27
Հոդված 29. Պատասխանատվությունը....29
Հոդված 30. Մուտքի մերժումը կամ հեռացումը....30
ՄԱՍ IV - ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ 31
Հոդված 31. Ապահովության և անվտանգության աշխատակիցների ներկայությունը....31
Հոդված 32. Խմիչքների շրջանառությունը/վաճառքը 31
Հոդված 33. Հանդիսատեսի շարժի սահմանափակումը 31
Հոդված 34. Հանրային անցուղիները 31
Հոդված 35. Դռները և դարպասները....32
Հոդված 36. Խաղային և տեխնիկական գոտիների պաշտպանությունը 32
Հոդված 37. Դրվագի տեսակրկնության ցուցադրումը լուսատախտակին....33
Հոդված 38. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգը, հաղորդավարները և հայտարարությունները....34
Հոդված 39. Քաղաքական ակցիաները 34
Հոդված 40. Սադրիչ գործողությունները և ռասիզմը 34
Հոդված 41. Երկրպագուներին մարզադաշտում պահելը 35
ՄԱՍ V - ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 36
Հոդված 42. Հավելվածը....36
Հոդված 43. Կարգապահական ընթացակարգերը....36
Հոդված 44. Կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը 36
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՈՒԵՖԱ-Ի ՌԱՍԻԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10 ԿԵՏԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՊԼԱՆԸ.37

ՀՖՖ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ		
Խմբագրություն 2	Ուժի մեջ է՝ 09.07.2021թ.-ից	Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 09.07.2021թ.-ին

ՄԱՍ I - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հապավումները և հասկացությունները

3.01. Սույն կանոնակարգում կիրառվում են հետևյալ հապավումները/հասկացությունները.

ՀՖՖ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

ՖԻՖԱ Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա

ՈՒԵՖԱ Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն

Ակումբ/Թիմ մարզական առումով ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ/թիմ, որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցաշարերին:

Խաղի կազմակերպիչ ակումբ, որը պատասխանատու է սեփական հարկի տակ անցկացվող խաղը կազմակերպելու համար կամ ակումբ կամ այլ կազմակերպություն, որը պատասխանատու է չեզոք գոտում խաղ կազմակերպելու համար՝ անկախ նրանից, թե իր թիմերից որևէ մեկը մասնակցում է, թե ոչ:

ՀՖՖ Պատվիրակ ՀՖՖ-ի կողմից նշանակված պաշտոնյա, ով պատասխանատու է խաղերի կազմակերպման և անցկացման համար:

Ոստիկանություն խաղի ժամանակ հասարակական կարգի և անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմին:

Մարզադաշտ ուսումնամարզական գործընթացի և տարբեր սպորտաձևերի շրջանակներում մարզական միջոցառումների անցկացման համար նախատեսված մարզական կառույցների համալիր՝ իր հարակից տարածքներով, ընդհուպ մինչև արտաքին սահմանազատիչները, որի հիմնական տարր է հանդիսանում ֆուտբոլային մրցումների անցկացման համար նախատեսված խաղադաշտը:

Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգ մարզադաշտի տարածքում ձայնային հաղորդակցությունների փոխանցման էլեկտրոնային համակարգ, որը պարունակում է բարձրախոսներ, խոսափողներ և այլ պարագաներ և որով հնարավոր է անմիջապես հստակ հաղորդակցություններ ուղղել ամբողջ հանդիսատեսին:

Պետական մարմիններ ապահովության և անվտանգության հարցերով պատասխանատու և իրավասու բոլոր մարմինները (ոստիկանություն, բժշկական, հրշեջ և փրկարար ծառայություններ և այլն):

Անվտանգության աշխատակիցներ խաղի կազմակերպչի անվտանգության ծառայություն, վերջինիս կազմի մեջ չներառված կարգադրիչներ, ինչպես նաև կամավորներ և անվտանգության մասնավոր ընկերություններ (դրանց աշխատակիցներ), որոնց խաղի կազմակերպչի կողմից տրված են լիազորություններ մարզադաշտում հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում կարգ ու կանոնի ապահովման վերահսկողությունն ապահովելու նպատակով:

Կարգադրիչներ խաղի կազմակերպչի կողմից նշանակված անձինք, ովքեր հետևում են մարզադաշտում կարգուկանոնի պահպանմանը և ապահովում են առանց միջադեպերի խաղի անցկացումը:

Կամավորներ խաղի կազմակերպչի կողմից նշանակված անձինք, ովքեր անհատույց աջակցում են ոստիկանությանը և անվտանգության աշխատակիցներին մշտադիտարկումների իրականացման և մարզադաշտում երկրպագուների գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում:

Հանդիսատես հանդիպումից առաջ, հանդիպման ընթացքում և հանդիպումից հետո տոմսի, աբոնեմենտի կամ հրավերի առկայության պարագայում մարզադաշտի տարածքում գտնվող և տվյալ խաղի կազմակերպմանն ու անցկացմանը, ինչպես նաև հասարակական կարգի պահպանման գործընթացում չներգրավված անձինք: Հանդիսատեսի՝ մարզադաշտ մուտք գործելը ենթադրում է վերջինիս կողմից սույն կանոնակարգի բոլոր դրույթների ճանաչում և ընդունում, որոնք գործում են տվյալ անձանց նկատմամբ մարզադաշտում գտնվելու ողջ ընթացքում:

Ֆան-ակումբ երկրպագուների կազմակերպություն կամ կազմակերպությունների միություն:

Մրցումներ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր՝ VBET Հայաստանի Պրեմիեր Լիգա, Առաջին խմբի առաջնություն, VBET Հայաստանի Գավաթի խաղարկություն, Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթի խաղարկություն, մանկապատանեկան ֆուտբոլի առաջնություններ):

Հանդիպում մրցումների շրջանակներում անցկացվող ֆուտբոլային հանդիպում:

«Հանդիպումից առաջ» ընկած ժամանակահատված Հանդիպման օրը հանդիսատեսի կամ հանդիպման մասնակից թիմերի ներկայացուցիչների՝ մարզադաշտի տարածք մուտք գործելու համար (կախված նրանից, թե որն է ավելի շուտ նախատեսված) մարզադաշտի բացման և հանդիպման մեկնարկի միջև ընկած ժամանակահատված:

«Հանդիպումից հետո» ընկած ժամանակահատված մրցավարի եզրափակիչ սուլիչի և թիմերի ներկայացուցիչների՝ մարզադաշտը լքելու կամ վերջին հանդիսականի՝ մարզադաշտը լքելու միջև ընկած ժամանակահատված (կախված նրանից, թե ով ավելի ուշ կլքի):

«Հանդիպման ժամանակ» հանդիպման մրցավարի մեկնարկին և եզրափակիչ սուլիչների միջև ընկած ժամանակահատված:

VIP գոտի մարզադաշտում նստատեղերի առանձնացված գոտի, որտեղ մուտքը թույլատրվում է ակումբների պաշտոնյաներին, ՀՖՖ ներկայացուցիչներին և պատվավոր հյուրերին:

Հոդված 2. Կիրառման շրջանակը

2.01. Սույն կանոնակարգը կիրառվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերի ընթացքում կազմակերպված և անցկացվող մրցաշարերի և խաղերի նկատմամբ:

2.02. Սույն կանոնակարգով կարգավորվում են բոլոր կազմակերպչական միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն տվյալ մրցաշարի յուրաքանչյուր

խաղից առաջ, ընթացքում և խաղից հետո՝ մարզադաշտում և դրա հարակից տարածքում անվտանգության ապահովման համար:

2.03. Կանոնակարգը չի սահմանում կազմակերպչական միջոցառումների սպառիչ ցանկը, որոնք պետք է ձեռնարկվեն խաղի կազմակերպչի և մասնակիցների կամ ակումբների կողմից, և չի բացառում ներպետական օրենսդրությունից բխող իրավական պարտավորությունները:

Հոդված 3. Նպատակը

3.01. Սույն կանոնակարգի նպատակն է խաղի կազմակերպչին ու մասնակիցներին կամ ակումբներին տեղեկացնել խաղից առաջ, ընթացքում և խաղից հետո իրենց պարտականությունների մասին, որպեսզի ապահովվի խաղին բոլոր ներկաների, ինչպես նաև մարզադաշտերի և տեղակայված բոլոր անհրաժեշտ գույքերի՝ ներառյալ սարքերի և սարքավորումների ապահովությունն ու անվտանգությունը:

Հոդված 4. Անվտանգության հարցերով պատասխանատուի նշանակումը

4.01. Յուրաքանչյուր ակումբ պետք է նշանակի անվտանգության հարցերով պատասխանատու, ով պետք է՝

ա) անմիջական կապ պահպանի երկրպագուների հետ և ծանոթանա նրանց սովորույթներին և նախապատվություններին,

բ) ոստիկանության հետ համագործակցելով՝ փորձի կազմել արձանագրություն բոլոր հայտնի կարգազանցների վերաբերյալ, ինչը կօգտագործվի այլ ակումբների անվտանգության հարցերով պատասխանատուների, ֆան-ակումբների, ոստիկանական մարմինների և այլոց հետ համագործակցության ժամանակ՝ թե՛ տնային, թե՛ արտագնա խաղերի ժամանակ,

գ) ունենա բավարար փորձառություն ամբոխի վերահսկման, ֆուտբոլային վայրերում ապահովության ու անվտանգության, հասարակական կարգի, տոմսային հարցերի և խաղի կազմակերպման հետ կապված հարցերում:

Հոդված 5. Ֆան-ակումբների հետ հարաբերությունները

5.01. Ակումբները պետք է խթանեն և խրախուսեն իրենց ֆան-ակումբների հետ լավ հարաբերությունների ձևավորումը հետևյալ կերպ՝

ա) խրախուսել տվյալ ակումբի հետ սերտ համագործակցություն սկսելն ու պահպանելը,

բ) տվյալ ֆան ակումբի անդամներից որևէ մեկին կամ մի քանիսին նշանակել պատասխանատու՝ կարգադրիչների և իրավապահ մարմինների կողմից ստացված տեղեկատվության փոխանցման և արտագնա խաղերին մեկնող երկրպագուների խմբերին ուղեկցման համար,

գ) ընդունել նրանց՝ որպես պաշտոնապես ճանաչված երկրպագուներ,

դ) տոմսերի բաշխման հարցերում նրանց հանդեպ ցուցաբերել արտոնյալ մոտեցում,

ե) կազմակերպել շրջայցեր մարզադաշտում, հանդիպումներ ֆուտբոլիստների ու պաշտոնյաների հետ, ինչպես նաև նմանատիպ այլ միջոցառումներ,

զ) անընդհատ կապ պահել նրանց հետ տեղեկատվական նամակներով և ցանկացած այլ տիպի կապի միջոցներով:

5.02. Ակումբները պետք է ֆան-ակումբներից պահանջեն, որպեսզի նրանց անդամները դրսևորեն բարեխիղճ վարքագիծ և դադարեցնեն խուլիգանական կամ հակասոցիալական վարքագիծ դրսևորող անձանց անդամակցությունը:

ՄԱՍ II - ԽԱՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գլուխ 1. Համագործակցությունը

Հոդված 6. Պետական մարմինների հետ համագործակցելու պարտավորությունը

6.01. Խաղի կազմակերպիչը խաղից առաջ պետք է խորհրդակցի համապատասխան պետական մարմինների հետ՝ սույն կանոնակարգով սահմանված միջոցների իրագործումն ապահովելու համար:

6.02. Խաղի կազմակերպիչը և մասնակից ակումբները պետք է իրականացնեն բոլոր հնարավոր գործողությունները, որպեսզի պետական մարմինների (հատկապես ոստիկանության) հետ համագործակցության միջոցով կանխարգելեն արդեն իսկ հայտնի և պոտենցիալ կարգազանցների մուտքը մարզադաշտ:

6.03. Ակումբները և խաղի կազմակերպիչը պետք է լիարժեք համագործակցեն միմյանց հետ:

Հոդված 7. Ապահովության և անվտանգության համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը

7.01. Խաղի կազմակերպիչը նախախաղային խորհրդակցության ժամանակ պետք է հաստատի և հանդիպման ՀՖՖ պատվիրակին ներկայացնի ոստիկանության ներկայացուցչի և ակումբի անվտանգության հարցերով պատասխանատուի ինքնությունը:

Հոդված 8. Անվտանգության աշխատակիցները

8.01. Խաղի կազմակերպիչը, համագործակցելով պետական մարմինների հետ, պետք է ապահովի ոստիկանների ներկայությունը մարզադաշտում և դրա հարակից տարածքում: Բացառություն են կազմում Մ-16, Մ-15, Մ-14, Մ-13, Մ-12 և Մ-10 տարիքային խմբերի մանկապատանեկան մրցաշարերի խաղերը, որտեղ

թույլատրվում է անվտանգությունն ապահովել՝ հյուրընկալող ակումբի սեփական ուժերով:

8.02. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի և ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթի հանդիպումներին մարզադաշտում կարգուկանոնին պետք է հետևեն կարգադրիչները, ովքեր պետք է վերապատրաստված լինեն ստանձնած պարտականությունները լիարժեք կատարելու համար: Մարզադաշտի կարգուկանոնն ապահովող մասնավոր ընկերությունների՝ խաղին ներգրավված ներկայացուցիչները կարող են ունենալ կարգադրիչների իրավունքներ և պարտականություններ:

8.03. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի և ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթի հանդիպումներին կարգադրիչները պատասխանատու են մարզադաշտ հանդիսատեսի մուտք գործելու, նրանց ճիշտ և ժամանակին տեղաբաշխելու համար, իսկ խաղի ընթացքում՝ սույն Կանոնակարգով սահմանված կանոնները հանդիսատեսի կողմից պահպանելու համար: Կարգադրիչները պետք է կազմակերպեն հանդիսատեսի ելքը մարզադաշտից: VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի և ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթի հանդիպումներին խաղի կազմակերպիչը պետք է մարզադաշտի յուրաքանչյուր հատվածում ապահովի սույն Կանոնակարգով սահմանված քանակի կարգադրիչներ, ընդ որում՝

ա) առնվազն մեկ կարգադրիչ պետք է գտնվի մարզադաշտի յուրաքանչյուր մուտքի մոտ՝ մարզադաշտ եկող հանդիսատեսի տոմսերի ստուգման և հանդիսականների զննման համար,

բ) առնվազն մեկ կարգադրիչ պետք է գտնվի յուրաքանչյուր սեկցիայի մուտքի մոտ՝ մարզադաշտ մուտք գործած հանդիսականներին համապատասխան նստատեղ ուղղորդելու համար,

գ) հանդիսատեսի մուտքի համար բաց յուրաքանչյուր սեկցիայում պետք է գտնվի առնվազն 2 կարգադրիչ, որոնցից առնվազն մեկը պետք է տեղակայվի տրիբունայի ստորին հատվածում և մեջքով կանգնած դեպի խաղադաշտը՝ դիտարկի տվյալ

սեկցիան, իսկ առնվազն մեկը պետք է տեղակայվի սեկցիային հարակից աստիճանավանդակներին,

դ) հյուր թիմի երկրպագուների համար առանձնացված սեկցիայում պետք է տեղակայվեն առնվազն 3 կարգադրիչներ, որոնցից մեկը պետք է տեղակայվի տրիբունայի ստորին հատվածում և մեջքով կանգնած դեպի խաղադաշտը՝ դիտարկի հյուր թիմի երկրպագուների սեկցիան, իսկ առնվազն երկու կարգադրիչ պետք է տեղակայվեն հյուր թիմի երկրպագուների և դաշտի տեր թիմի երկրպագուների սեկցիաների տարանջատման հատվածում,

ե) առնվազն 1 կարգադրիչ պետք է գտնվի մարզադաշտի VIP գոտու յուրաքանչյուր մուտքի մոտ,

զ) կարգադրիչներ պետք է տեղակայվեն նաև խաղադաշտի երկայնքով՝ յուրաքանչյուր 10 մետրը 1 կարգադրիչ:

Բոլոր դեպքերում, կարգադրիչների քանակը պետք է որոշվի՝ հաշվի առնելով մարզադաշտի հնարավորությունները (մուտքերի և ելքերի քանակը, պահեստային ելքերը և այլն), ակնկալվող և փաստացի հանդիսականների քանակը և հանդիպման պոտենցիալ վտանգավորության աստիճանը՝ ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նախատեսել 1 կարգադրիչ 70 հանդիսականի համար:

8.04. Հանդիսատեսի կողմից սույն կանոններին հակասող գործողությունների իրականացման դեպքում կարգադրիչը պետք է ձեռնարկի ՀՀ գործող օրենսդրությանը և սույն կանոնակարգին չհակասող բոլոր միջոցառումները՝ այդ գործողությունները կանխելու համար:

8.05. Քաղաքացիների կյանքի կամ առողջության համար վտանգավոր իրավիճակների առաջացման, ինչպես նաև այլ իրավիճակների դեպքում, որոնց մասին կարգադրիչը նախապես ցուցումներ է ստացել, կարգադրիչը պարտավոր է կարգադրիչների ղեկավարին կամ խաղի կազմակերպչի անվտանգության հարցերով պատասխանատուին անհապաղ տեղեկացնել ստեղծված իրավիճակի մասին:

8.06. Այն դեպքում, երբ կարգադրիչը չի կարողանում ինքնուրույն կանխել հանդիսատեսի անօրինական գործողությունները, պետք է ստեղծված իրավիճակի մասին տեղյակ պահի ոստիկանությանը: Այդ դեպքում ոստիկանությունը գործում է ինքնուրույն՝ առաջնորդվելով ՀՀ Ոստիկանության կողմից հաստատված

ցուցումներով՝ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի: Միաժամանակ կարգադրիչները պետք է ոստիկանության մարմիններին օգնություն ցուցաբերեն՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

8.07. Կարգադրիչները պետք է կրեն միանման, վառ, տեսանելի գույնի հագուստ, որպեսզի վերջիններիս հնարավոր լինի հեշտ տարբերել: Կարգադրիչների հագուստի վրա պետք է գրված լինի «կարգադրիչ» կամ «steward» բառերը: Կարգադրիչների ղեկավարները պետք է իրենց համազգեստով հեշտությամբ տարբերվեն մյուս կարգադրիչներից:

8.08. Կարգադրիչները պարտավոր են նաև՝

ա) իրականացնել տոմսերի, հրավերների և հավատարմագրերի վիզուալ ստուգում մարզադաշտի առաջնային մուտքերի մոտ,

բ) անհրաժեշտության դեպքում իրականացնել մարզադաշտ մուտք գործող բոլոր երկրպագուների զննում, այդ թվում՝ երկրպագուների մոտ առկա պայուսակների և այլ կրիչների ստուգում (իգական սեռի երկրպագուների պարագայում զննումն իրականացվում է իգական սեռի կարգադրիչների կողմից),

գ) իրականացնել մարզադաշտի անցումների անվտանգության վերահսկողությունը՝ արտաքին և ներքին տրամագծերով, ինչպես նաև հատուկ գոտիներում,

դ) արգելել մարզադաշտ մուտք գործել դրա իրավունքը չունեցող ցանկացած անձի, ինչպես նաև ալկոհոլային և/կամ այլ արգելված միջոցների ազդեցության տակ գտնվող անձանց, ոստիկանական մարմինների հետ համատեղ վերահսկել և ստուգել մարզադաշտ մուտք գործող և գործած անձանց, իրականացնել նրանց մոտ գտնվող առարկաների ստուգում,

ե) հեռացնել կամ չթույլատրել մուտք գործել մարզադաշտ այն անձանց, ովքեր հրաժարվում են ենթարկվել ստուգման,

զ) ժամանակավոր վերացնել, հեռացնել և սահմանված կարգով, եթե հնարավոր է, վերադարձնել այն առարկաները, որոնց մուտքը մարզադաշտ արգելված է՝ համաձայն սույն կանոնակարգի,

է) ապահովել հանդիսատեսի տեղաբաշխումը տոմսերում նշված սեկցիաներ և նստատեղեր,

ը) հետևել, որպեսզի բոլոր մուտքերը և ելքերը՝ հիմնական և պահեստային, խցանված չլինեն,

թ)հսկել մուտքերն ու ելքերը, ինչպես նաև դեպի տրիբունաներ պահեստային անցումները՝ սկսած մարզադաշտի բացումից մինչև փակվելը,

ժ) թույլ չտալ հանդիսատեսին հայտնվել այնպիսի գոտիներում, որտեղ մուտք գործելն արգելված է (մասնավորապես, բայց չսահմանափակվելով՝ խաղադաշտ),

ի) ոստիկանությանը տեղյակ պահել հանդիսատեսի կողմից ցանկացած անօրինական գործողության կատարման և/կամ կատարման վտանգի մասին,

լ) վտանգավոր իրավիճակների դեպքում տեղեկացնել ոստիկանությանը, շտապ օգնության ծառայությանը և իրավասու այլ մարմիններին, եթե նրանք չեն կարողանում ինքնուրույն չեզոքացնել վտանգը,

խ) կարգադրիչները պետք է տեղեկացնեն ոստիկանությանը ցանկացած անօրինական գործողության մասին՝ խախտումը կանխելու և մարզադաշտի տարածքում կարգուկանոնը խախտող անձանց հեռացնելու նպատակով:

8.09. Յուրաքանչյուր կարգադրիչ պատասխանատու է իր ղեկավարի կողմից նշանակված տրիբունայի և սեկցիայի համար:

Հոդված 9. Հանդիսատեսի տարանջատումը և ամբոխի ցրման ռազմավարությունը

9.01. Խաղի կազմակերպիչը, ոստիկանության գլխավոր պատասխանատուի և/կամ խաղի կազմակերպչի անվտանգության հարցերով պատասխանատուի հետ համատեղ, պետք է որոշի մարզադաշում հանդիսատեսի տարանջատման ռազմավարությունը և խաղից հետո ամբոխի ցրման ռազմավարությունը:

9.02. Մարզադաշում հանդիսատեսի տարանջատման ռազմավարությունը և խաղից հետո ամբոխի ցրման ռազմավարությունը պետք է խաղի օրը կայանալիք նախախաղային խորհրդակցության ընթացում քննարկվի ՀՖՖ Պատվիրակի հետ:

Հոդված 10. Մարզադաշտի ստուգումը

10.01. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի առաջնության, VBET Հայաստանի գավաթի և Սուպերգավաթի խաղարկությունների խաղի կազմակերպիչը պետք է ապահովի համապատասխան պետական ծառայությունների կողմից մարզադաշտի մանրակրկիտ ստուգումը և վերջինիս անվտանգություն վկայագրի ստացումը:

10.02. Անվտանգության վկայագիրը պետք է վավեր լինի մեկ տարուց ոչ ավել՝ խաղի օրվա դրությամբ:

Հոդված 11. Հանդիսատեսի համար առաջին օգնությունը

11.01. Հանդիսատեսին առաջին օգնություն ցուցաբերելու համար նշանակված բուժաշխատակիցների քանակն ու որակավորումը պետք է հաստատվի համապատասխան պետական մարմինների կողմից, որոնք պետք է որոշեն նաև խաղի ժամանակ տեղակայված շտապօգնության մեքենաների քանակը:

11.02. Առաջին օգնություն ցուցաբերողները պետք է իրենց համազգեստով հեշտությամբ ճանաչելի լինեն:

Գլուխ 2. Տոմսերը

Հոդված 12. Տոմսերի վաճառքը

12.01. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան ՀՀ Սուպերգավաթի հանդիպումների մուտքը պետք է լինի միայն տոմսերով, հրավերներով կամ մուտքի իրավունք տվող համապատասխան հավատարմագրերով:

12.02. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Սուպերգավաթի հանդիպումների տոմսերի վաճառքը պետք է խստորեն վերահսկվի կազմակերպիչների կողմից:

12.03. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Սուպերգավաթի հանդիպումների տոմսերը կարող են վաճառվել օնլայն տարբերակով, մարզադաշտի տոմսարկղում կամ նույն քաղաքի մեկ այլ վայրում միայն մասնակից ակումբների հետ խորհրդակցելով:

Հոդված 13. Տոմսերի բաշխումը

13.01. Յուրաքանչյուր մասնակից ակումբ, ում հատկացվում են խաղի տոմսեր, պատասխանատու է այդ տոմսերի՝ միայն իր երկրպագուներին տրամադրելու համար:

13.02. Երբ խաղն անցկացվում է չեզոք գոտում, խաղի կազմակերպիչը պատասխանատու է հատկացված տոմսերը մասնակից թիմերի երկրպագուներին չփոխանցելու համար:

13.03. Խաղի կազմակերպիչները կամ ակումբները, ում հատկացվել են տոմսեր, լիովին պատասխանատու են որևէ տոմսի՝ սև շուկայում կամ լիազորություն չունեցող անձանց կամ գործակալությունների ձեռքերում հայտնվելու համար:

Հոդված 14. Տոմսերի բաշխման ռազմավարությունը

14.01. Ոստիկանության և/կամ այլ պետական մարմինների հետ խորհրդակցելով՝ խաղի կազմակերպիչը պետք է երաշխավորի, որ, անհրաժեշտության դեպքում, տոմսերը բաշխվեն այնպես, որ ապահովվի երկրպագուների տարբեր խմբերի օպտիմալ տարանջատումը: Միաժամանակ պետք է հաշվի առնվի այն փաստը, որ չեզոք գոտում կայանալիք խաղի ժամանակ կարող են ներկա գտնվել հանդիսատեսի երեք խմբեր՝ մասնակից յուրաքանչյուր երկու թիմերի երկրպագուներ և տեղացի՝ չեզոք հանդիսականներ:

14.02. Տարանջատման կազմակերպական հարցի մի մաս է կազմում նաև ակնկալվող հանդիսատեսին հետևյալի մասին տեղեկացնելը՝

ա) մարզադաշտի այն սեկտորների մասին, որտեղի տոմսեր նրանք կարող են ձեռք բերել,

բ) եթե նրանք գտնվեն սխալ սեկտորում՝ հակառակորդ թիմի երկրպագուների հատվածում, ապա նրանց հնարավոր է տեղափոխեն ավելի նախընտրելի սեկտոր կամ հեռացնեն մարզադաշտից՝ համաձայն ոստիկանության և/կամ այլ պետական մարմինների կայացրած որոշման:

14.03. Եթե տոմսերի բաշխման ռազմավարությունը ոստիկանության և/կամ այլ պետական մարմինների հետ համաձայնեցված է, և տոմսերը համապատասխանաբար բաշխված են, ապա ոչ մի հանգամանք (ցանկացած տեսակի) հաշվի չի առնվում այդ ռազմավարությունը փոխելու համար:

Հոդված 15. Սև շուկան և հակակեղծիքային միջոցները

15.01. Անհրաժեշտության դեպքում խաղի կազմակերպիչը քննարկում է ոստիկանության և/կամ այլ պետական մարմինների հետ, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն մարզադաշտի շրջակայքում գործող սև շուկայի տոմսավաճառների հանդեպ, մասնավորապես, հաշվի առնելով, որ նման գործողությունները կարող են վտանգել տարանջատման ռազմավարությունը:

15.02. Նման գործողությունը կարող է իրենից ենթադրել մեկ անձին վաճառվող տոմսերի քանակի սահմանափակում:

15.03. Ամենաբարդ հակակեղծիքային միջոցները պետք է ընդգրկվեն խաղային տոմսերի ստուգման մեջ, և մարզադաշտում ու հարակից տարածքում գտնվող բոլոր անվտանգության աշխատակիցները պետք է ծանոթ լինեն այդ միջոցներին, որպեսզի արագ բացահայտեն կեղծ տոմսերը:

15.04. Կեղծ տոմսերի շրջանառվելու մասին տեղեկանալուն պես խաղի կազմակերպիչը պետք է դիմի ոստիկանությանը և/կամ այլ պետական մարմիններին՝ խնդրի լուծման շուրջ ռազմավարություն մշակելու համար:

Հոդված 16. Տոմսերի քվոտաները և գները

16.01. Խաղի մասնակից ակումբները պետք է միմյանց հետ համաձայնեցնեն տոմսի քվոտաները, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցաշարին վերաբերող այլ

կանոնակարգեր սահմանում են, որ այդ որոշումը կայացնելու իրավունքը վերապահված է ՀՖՖ-ին:

16.02. Հյուր ակումբն իրավունք ունի դիմելու դաշտի տեր ակումբին՝ մարզադաշտի ընդհանուր նստատեղերի մինչև 5%-ը հյուր ակումբին հատկացնելու նպատակով:

16.03. Դաշտի տեր ակումբը, հյուր ակումբի կողմից դիմումը ստանալու դեպքում, պարտավոր է վերջինիս համար հատկացնել պահանջված թվով տոմսեր, եթե տվյալ թիվը չի գերազանցում մարզադաշտի ընդհանուր նստատեղերի 5%-ը: եթե մարզադաշտում հյուր թիմի երկրպագուների համար առանձնացված հատվածում նստատեղերի քանակը գերազանցում է մարզադաշտի ընդհանուր նստատեղերի 5%-ը, ապա նշված առանձնացված հատվածի բոլոր նստատեղերը պետք է հատկացվեն հյուր թիմին:

16.04. Հյուր թիմի երկրպագուների համար նախատեսված տոմսերի գները չպետք է գերազանցեն հյուրընկալող թիմի երկրպագուներին վաճառվող նույն կատեգորիայի տոմսերի գներից:

Հոդված 17. Տոմսերի մասին տեղեկությունը

17.01. Տոմսերի վրա պետք է արտացոլվի հետևյալ տեղեկատվությունը՝ մրցաշարի անվանումը, մասնակից թիմերի անունները, մարզադաշտի անվանումը, ամսաթիվը և խաղի սկսվելու ժամը, նստատեղի հստակ ցուցումը (սեկտոր, շարք, նստատեղի համար), հանդիսատեսի վարքագծի կանոնները:

Գլուխ 3. Հյուր թիմը և երկրպագուները

Հոդված 18. Հյուր թիմի անվտանգությունը

18.01. Անհրաժեշտության դեպքում խաղի կազմակերպիչը պետք է սերտորեն համագործակցի ոստիկանության հետ՝ ապահովելու համար հյուրընկալվող թիմի և պաշտոնյաների անվտանգությունը հյուրանոցում, մարզումներին, դեպի մարզադաշտ և հակառակը ուղևորվելիս:

18.02. Անհրաժեշտության դեպքում խաղի կազմակերպիչը հյուր թիմի երկրպագուների անվտանգությունը ապահովելու համար պետք է նրանց համար հատկացնի երկաթյա արգելապատնեշով կամ կարգադրիչներից կազմված կենդանի պատով առանձնացված սեկցիա:

Հոդված 19. Հյուր երկրպագուների ճամփորդությունը

19.01. Եթե երկրպագուներին, անվտանգության նկատառումներից ելնելով, խորհուրդ չի տրվում մեկնել արտագնա խաղին, խաղի կազմակերպիչը և մասնակից ակումբները պետք է անեն հնարավոր ամեն ինչ կանխելու նրանց մեկնումը:

19.02. Եթե արտագնա խաղին ակնկալվում է ավելի քան 100 երկրպագուների մեկնում, ապա հյուր ակումբը պետք է նշանակի երկրպագուների հարցերով պատասխանատուների՝ ճամփորդության և խաղի ժամանակ երկրպագուներին ուղեկցելու և աջակցելու, ինչպես նաև պետական մարմինների և երկրպագուների միջև կապ հաստատելու համար:

ՄԱՍ III - ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՄՈՒՏՔԸ ՄԱՐԶԱԴԱՇՏ

Հոդված 20. Մարզադաշտի ստուգումը և վերահսկումը

20.01. Խաղի կազմակերպիչը պետք է ապահովի, որ

ա) մարզադաշտը հսկվի ապօրինի ներխուժումից,

բ) մինչև հանդիսատեսի մուտք գործելը մարզադաշտում իրականացվեն վերջինիս անվտանգության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ (չթույլատրված անձանց կամ արգելված առարկաների/նյութերի որոնում և հեռացում):

Հոդված 21. Հանդիսատեսի տարանջատումը

21.01. Անհրաժեշտության դեպքում երկրպագուների տարբեր խմբերի տարանջատումը պետք է սկսվի մարզադաշտից բավականաչափ հեռավորության վրա, որպեսզի կանխվի մարզադաշտ տանող ուղիներին կամ դռների մոտ երկրպագուների տարբեր խմբերի անցանկալի բախումը և/կամ կուտակումը:

21.02. Անհրաժեշտության դեպքում երկրպագուների տարբեր խմբերի համար խաղի կազմակերպչի կողմից պետք է ապահովվեն առանձին մեքենաներ և ավտոբուսներ: Ցանկալի է, որ վերջիններս գտնվեն մարզադաշտի տարբեր կողմերում և հնարավորինս մոտ երկրպագուների համար նախատեսված համապատասխան սեկտորներին:

Հոդված 22. Տեղեկատվությունը հանդիսատեսի համար

22.01. Խաղի կազմակերպիչը պետք է մարզադաշտի տարածքում հանդիսատեսին վիզուալ և/կամ ձայնային հաղորդակցման միջոցով հիշեցնի արգելված իրեր կամ նյութեր մարզադաշտ բերելու փորձեր չձեռնարկելու կարևորության, սպորտային ու պատշաճ զսպված վարքագիծ ցուցաբերելու անհրաժեշտության, ինչպես նաև հնարավոր անբարենպաստ հետևանքների մասին:

22.02. Խաղի կազմակերպիչը պետք է ապահովի, որ մարզադաշտի բոլոր մուտքերի մոտ, տեսանելի վայրում փակցված լինի արգելված իրերի և նյութերի ցանկը:

Հոդված 23. Մարզադաշտի դարպասների բացումը հանդիսատեսի համար

23.01. Խաղի կազմակերպիչը, ոստիկանության ներկայացուցչի և/կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուի հետ միասին հանդիպման նախախաղային խորհրդակցության ժամանակ որոշում են և ՀՖՖ Պատվիրակին են ներկայացնում հանդիսատեսի համար մարզադաշտի դարպասները բացվելու ժամը՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

ա) հանդիսատեսի ակնկալվող քանակ,

բ) հանդիսատեսի տարբեր խմբերի մարզադաշտ ժամանելու ակնկալվող ժամ,

գ) մարզադաշտում հանդիսատեսի համար հյուրասիրություն (հյուրասիրություն խաղադաշտում, զովացուցիչ ըմպելիքների շրջանառություն և այլն),

դ) մարզադաշտի տարածքում տեղի ունեցող խաղին նախորդող այլ իրադարձություններ (համերգ, խաղարկություններ և այլ միջոցառումներ),

ե) մարզադաշտից դուրս գտնվող ազատ տարածություն,

զ) մարզադաշտից դուրս հյուրասիրության հնարավորություն,

է) տարանջատման ռազմավարություն մարզադաշտից դուրս:

Հոդված 24. Անվտանգության աշխատակիցները

24.01. Մուտքի/ելքի դռները կամ դարպասները պետք է լինեն սարքին և գործածվեն համապատասխան փորձ ունեցող անվտանգության աշխատակիցների կողմից:

24.02. Մարզադաշտում կարգադրիչները, պետք է ապահովեն հանդիսատեսների անարգել հոսքը դեպի իրենց նստատեղեր՝ առանց ուշացման և շփոթմունքի:

24.03. Անվտանգության ողջ անձնակազմը պետք է ծանոթ լինի մարզադաշտի դասավորությանը և վերջինիս անվտանգության, արտակարգ իրավիճակների և տարհանման ընթացակարգերին:

Հոդված 25. Հանդիսատեսի ստուգումը և խուզարկումը

25.01. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան ՀՀ Սուպերգավաթի հանդիպումներին հանդիսականների տոմսերը պետք է ստուգման ենթարկվեն կարգադրիչների կողմից արտաքին պարագծային պարսպի մոտ (եթե այդպիսինն առկա է) կամ պարագծային պարիսպ չլինելու դեպքում անվտանգության աշխատակիցներից կազմված կենդանի պատի մոտ, որպեսզի մարզադաշտի տարածք անցնեն միայն տոմսատերերը, և կատարվեն նախնական ստուգումները՝ արգելված իրերի/նյութերի մարզադաշտ մտցնելը կանխելու համար:

25.02. Անվտանգության աշխատակիցները կարող են ստուգումներ անցկացնել նաև սեկցիայի մուտքի մոտ, որպեսզի ապահովեն հետևյալը՝

ա) հանդիսատեսը մուտք գործի մարզադաշտի ճիշտ հատվածը,

բ) մուտքն արգելված լինի հայտնի կամ հնարավոր կարգազանցների համար ալկոհոլի/թմրադեղերի ազդեցության տակ գտնվող անձանց համար:

25.03. Ստուգումներն ու խուզարկումները պետք է կազմակերպվեն արդյունավետ կերպով, որպեսզի նույն հանդիսականը չխուզարկվի ավելի քան մեկ անգամ, և որ այդ ստուգումներն անհարկի ձգձգման պատճառ չդառնան կամ ստեղծեն ավելորդ լարվածություն:

25.04. Յուրաքանչյուր հանդիսական պետք է ստուգվի և խուզարկվի նույն սեռի անվտանգության աշխատակցի կողմից:

Հոդված 26. Հանդիսատեսի աջակցության կարգը և նրա կողմից մարզադաշտ բերվող երկրպագման թույլատրելի պարագաները

26.01. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի, ՀՀ Առաջին խմբի առաջնության, VBET Հայաստանի գավաթի խաղարկության և Հակոբ Տոնոյանի անվան ՀՀ Սուպերգավաթի հանդիպումների մեկնարկից ոչ ուշ, քան 24 ժամ առաջ թիմերի ֆան-ակումբները պետք է խաղի կազմակերպչին ներկայացնեն հանդիպման ժամանակ մարզադաշտում աջակցության միջոցների (բացառությամբ 26.02 կետում նշված աջակցության միջոցների) տեղակայման մասին (բաներներ, մեծ դրոշներ, թմբուկներ և այլն): Իր հերթին խաղի կազմակերպիչը պետք է նախախաղային խորհրդակցության ժամանակ 2 թիմերի աջակցության միջոցները ներկայացնի հանդիպման ՀՖՖ Պատվիրակի համաձայնությանը:

26.02. Աջակցության այն միջոցները, որոնց համար որևէ համաձայնություն չի պահանջվում, պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

ա) Բաներները և դրոշները պետք է լինեն 2 մ x 1.5 մ կամ ավելի փոքր չափսերի, պատրաստված լինեն հրակայուն, անվտանգ նյութերից, այդ թվում՝ պլաստմասե ճկուն, սնամեջ դրոշակաձողերի վրա, որոնց չափերը չեն գերազանցում 1.5 մ երկարությունը և 5 սմ տրամագիծը,

բ) չպետք է պարունակեն քաղաքական, ծայրահեղ, սադրիչ կամ գովազդային բնույթի գրություններ,

գ) պետք է տեղադրվեն մարզադաշտի տրիբունաների՝ հանդիսատեսով չզբաղեցված սեկցիաներում կամ այլ վայրերում, որտեղ էապես չեն խանգարի այլ հանդիսատեսի կողմից հանդիպման դիտումը,

դ) ոչ հայերեն լեզվով բառեր և արտահայտություններ պարունակող աջակցության միջոցները պետք է ունենան ակումբի կողմից վավերացված թարգմանություն,

ե) հապավումներ և թվերի համակցություններ պարունակող աջակցության միջոցները պետք է ունենան դրանց վերաբերյալ ակումբի կողմից վավերացրած բացատրություն,

զ) վերոնշյալ պարագաների սեփականատերերը մարզադաշտ մուտք գործելիս պետք է խաղի կազմակերպչին և/կամ անվտանգության աշխատակիցներին, կարգադրիչներին ներկայացնեն այդ պարագաները՝ պարզելու համար դրանց համապատասխանելիությունը ներկայացված պահանջներին,

է) հանդիսատեսի/երկրպագուների կողմից սույն կանոնների խախտման դեպքում կարգադրիչները, անվտանգության աշխատակիցները և/կամ ոստիկանության աշխատակիցները կարող են որոշում կայացնել աջակցության վերոնշյալ միջոցների օգտագործումն արգելելու վերաբերյալ:

26.03. Ֆան-ակումբները առանձին հանդիպումների ժամանակ իրավունք ունեն օգտագործել երկրպագման պարագաներ, ինչպես նաև մասնակից թիմին ձայնային հզոր աջակցություն ցուցաբերելու համար նախատեսված, 200 Վտ-ից ոչ ավելի հզորությամբ օժտված համակարգեր (յուրաքանչյուր սեկցիայում՝ մեկ միավոր համակարգից ոչ ավել), որոնց համար հայտերը պետք է ներկայացվեն խաղի կազմակերպչին ոչ ուշ, քան հանդիպման մեկնարկից 24 ժամ առաջ:

26.04. Մարզադաշտում հանդիպումից առաջ, հետո և հանդիպման ընթացքում հանդիսատեսի կամ այլ անձանց կողմից նախապես խաղի կազմակերպչի հետ չհամաձայնեցված հատուկ ակցիաների անցկացումը պատժվում է ՀՖՖ-ի կողմից: Հատուկ ակցիաներ են համարվում գովազդային տարատեսակ ակցիաները, գեղարվեստական ներկայացումները, լռության րոպեները և այլն:

26.05. ՀՖՖ-ն, ոստիկանության մարմինների հետ համատեղ, պարբերաբար թարմացնում է մարզադաշտի տարածքում արգելվող առարկաների ցանկը:

26.06. Հանդիսատեսին թույլատրվում է մարզադաշտ բերել Աղյուսակ 1-ում ներառված երկրպագման պարագաները

Աղյուսակ 1

	Անվանում	Չափս	Պահանջ
	Բարձրախոս	Ցանկացած	Հզորությունը ոչ ավել քան 200 Վտ, քանակը ոչ ավել քան 1 միավոր մեկ սեկտորի համար (անցկացում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները)

	Թմբուկ	Լայնությունը՝ մինչև 60 սմ Բարձրությունը՝ մինչև 40 սմ	Անցկացում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները
	Դրոշ	Դրոշակաձողը՝ մինչև 1,5 մ երկարություն և մինչև 5 սմ տրամագիծ	• Միան պլաստիկ և սնամեջ դրոշակաձողերով: • Բովանդակությունը չպետք է խախտի ՀՀ քրեական օրենսգիրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, ՀՖՖ կանոնակարգերը, ինչպես նաև չպետք է պարունակի ֆուտբոլային հանդիպման մասնակիցների, մրցավարների, հանդիսականների և ոստիկանության նկատմամբ վիրավորական, ռասիստական, ծայրահեղական, քաղաքական, խտրական կամ զովազդային բնույթի արտահայտություն(ներ)
	Բաներ-տրանսպարանտ	Լայնությունը՝ մինչև 2 մ, Երկարությունը՝ մինչև 1,5 մ	• Բովանդակությունը չպետք է խախտի ՀՀ քրեական

	Բաներ-պաստառ	Ցանկացած (անցկացում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները)	օրենսգիրքը, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները, ՀՖՖ կանոնակարգերը, ինչպես նաև չպետք է պարունակի ֆուտբոլային հանդիպման մասնակիցների, մրցավարների, հանդիսականների և ոստիկանության նկատմամբ վիրավորական, ռասիստական, ծայրահեղական, քաղաքական, խտրական կամ գովազդային բնույթի արտահայտություն(ներ)
	Դրոշ-պաստառ	Ցանկացած (անցկացում և օգտագործում են միայն կազմակերպված ֆան ակումբները	

Հոդված 27. Հանդիսատեսի պարտականությունները

27.01. Այլ հանդիսատեսների և միջոցառման մասնակիցների, սպասարկող անձնակազմի, կարգուկանոնի պահպանման պատասխանատուների իրավունքներն ու օրինական շահերը պահպանելու նպատակով, մարզադաշտում գտնվող հանդիսատեսը պարտավորվում է՝

ա) գտնվելով մարզադաշտում և նրա հարակից տարածքներում պահպանել հասարակական կարգը և վարքագծի համընդհանուր նորմերը,

բ) խնամքով վերաբերվել մարզադաշտի և այլ հանդիսականների սեփականությանը, պահպանել մաքրություն,

գ) անվտանգության աշխատակիցներին, կարգադրիչներին ներկայացնել տոմսերը, հրավերները կամ փաստաթղթերը (հավատարմագրերը), որոնք հնարավորություն են տալիս ներկա գտնվելու հանդիպմանը և զբաղեցնելու ձեռք բերված տոմսերում կամ դրանց փոխարինող փաստաթղթերում նշված նստատեղերը,

դ) միջոցառմանը տրանսպորտային որևէ միջոցով ներկայանալու դեպքում անվտանգության աշխատակիցներին և կարգադրիչներին ներկայացնել ավտոտրանսպորտային անցաթղթեր և փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս մեքենայի մեջ գտնվող բոլոր անձանց ներկա լինել հանդիպմանը:

ե) թույլատրել անվտանգության աշխատակիցներին և ոստիկանության աշխատակիցներին իրականացնել մեքենայի ստուգում և կայանել տրանսպորտային միջոցը սահմանված վայրում:

զ) անվտանգության աշխատակիցներին և ոստիկանության աշխատակիցներին անհապաղ տեղյակ պահել կասկածելի առարկաների հայտնաբերման, հրդեհի կամ ծխի առաջացման, մարզադաշտում գտնվող անձանց բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին,

է) անվտանգության ապահովման և մարզադաշտ արգելված առարկաներ մտցնելու կամ մարզադաշտից դուրս բերելու դեպքերը բացառելու համար անցնել հատուկ ստուգում/զննում,

ը) մարզադաշտի կարգադրիչներին մինչև խաղի ավարտը ի պահ հանձնել ծանր կամ մարզադաշտի տարածք մտցնելու համար արգելված առարկաները. այս կանոնը պահպանելու իմաստով արգելված առարկա է համարվում 25 սմ x 25 սմ x 25 սմ չափսերը գերազանցող ցանկացած առարկա, բացառությամբ՝ սույն կանոնակարգում նշված թմբուկների,

թ) կատարել անվտանգության աշխատակիցների և ոստիկանության աշխատակիցների օրինական հրահանգները,

ժ) տարհանման մասին տեղեկություն ստանալու դեպքում գործել առանց խառնաշփոթ առաջացնելու, տարհանման պլանին համապատասխան կամ

մարզադաշտում կարգուկանոնի պահպանման համար պատասխանատու անձանց ցուցումներով՝ խաղի կազմակերպիչների, անվտանգության աշխատակիցների, մարզադաշտի սեփականատիրոջ և (կամ) օրինական տիրապետողի, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության կամ ԱԻՆ աշխատակիցների ցուցումների:

Հոդված 28. Հանդիսատեսին արգելվում է

28.01. ՀՀ օրենսդրական նորմերին հետևելու, այլ հանդիսատեսների և միջոցառման մասնակիցների, սպասարկող անձնակազմի, կարգ ու կանոնի պահպանման պատասխանատուների իրավունքներն ու օրինական շահերը պահպանելու նպատակով, մարզադաշտում գտնվող հանդիսատեսին արգելվում է՝

ա) ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ մարզադաշտ մուտք գործելը և մարզադաշտում գտնվելը,

բ) Խաղի կազմակերպչի կողմից արգելված վայրերում ծխելը,

գ) իրերի, այդ թվում՝ բանջարեղենի, մրգերի կամ ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև խաղադաշտի ուղղությամբ կամ հենց խաղադաշտ,

դ) իրենց կամ այլ անձանց հանդեպ առողջության, կյանքի կամ անվտանգության սպառնալիք ստեղծող գործողությունների իրականացումը,

ե) մարզադաշտ մուտք գործելիս կամ մարզադաշտում գտնվելիս դեմքը փակելու նպատակով հագուստի տարրերի կամ այլ իրերի և մեթոդների օգտագործումը,

զ) հանդիսականների համար չնախատեսված շինություններում, կառույցներում և այլ վայրերում գտնվելը (ֆասադներ, ցանկապատեր, պատեր, արգելապատնեշներ, լուսավորության սյուներ, տեսախցիկների հարթակներ, տանիքներ, ծառեր և այլն),

է) խաղադաշտ կամ խաղադաշտի հարակից տարածք, այլ՝ այցելության համար արգելված կամ հանդիսատեսի տոմսի կամ հավատարմագրի վրա չնշված

գոտիներ մուտք գործելը (մարզադաշտի տեխնիկական գոտի, VIP, ԶԼՄ գոտիներ և այլն),

ը) մարզադաշտից տարհանման համար նախատեսված գոտիներում, այդ թվում՝ ինչպես հիմնական, այնպես էլ պահեստային միջանցքներում, ելքերում և մուտքերում և աստիճանավանդակներին խոչընդոտների ստեղծումը,

թ) բղավոցները, վանկարկումները, երգերի կատարումները, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք վիրավորում են միջոցառման մասնակիցների և հանդիսատեսի կամ այլ անձանց արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ կամ ուղղված են ռասսայական, սոցիալական, ազգային խտրականություն առաջացնելուն,

ժ) առանց խաղի կազմակերպչի թույլտվության մարզադաշտի տարածքում տեղակայված շինությունների և կառույցների վրա գրելն ու նկարելը, ինչպես նաև դրանց կողքին օտարածին իրեր տեղադրելը,

ի) առանց խաղի կազմակերպչի թույլտվության առևտուր իրականացնելը, հայտարարություններ, պաստառներ և տեղեկատվական բովանդակություն ունեցող այլ իրեր փակցնելը,

լ) մարզադաշտ մուտք գործել կենդանիներով,

խ) ցանկացած քաղաքական ակցիաներ իրականացնելը, մասնավորապես այնպիսիք, որոնք ուղղված են քաղաքական հայացքների հասարակական արտահայտմանը, պետական կամ տեղական իշխանության մարմինների կողմից կայացրած քաղաքական որոշումների վերաբերյալ հավանության/անհամաձայնության, աջակցության/բողոքի արտահայտմանը:

28.02. Հանդիսատեսին արգելվում է մարզադաշտի տարածք մտցնել և օգտագործել՝

ա) ցանկացած տեսակի, այդ թվում՝ նաև ինքնապաշտպանության համար նախատեսված զենք, զինամթերք, կտրող և ծակող առարկաներ, արցունքաբեր և նյարդային ազդեցության գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ հանդիսականների առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ՝ բացառությամբ թմբուկների (վերջինիս քանակը յուրաքանչյուր

տրիբունայի համար պետք է չգերազանցի 2-ը՝ համաձայն սույն կանոնակարգի պահանջների),

բ) դյուրավառ նյութեր՝ անկախ դրանց տեսակից և նշանակությունից, ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի պատրաստման կամ ծուխ առաջացնելու համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայտրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ, վառելանյութեր (բացառությամբ՝ լուցկիների, կրակայրիչների և ծխախոտի),

գ) շշեր, բաժակներ, սափորներ կամ տարաներ, այդ թվում՝ նաև անագներ, ինչպես նաև պոլիէսթերից, ապակուց կամ ցանկացած այլ փխրուն, կոտրվող կամ, հակառակը, չափազանց պինդ նյութերից պատրաստված առարկաներ, այդ թվում՝ նաև տետրապակ փաթեթներ,

դ) ձայն արտաբերող փողային հարմարանքներ (վուվուզելաներ, շեփորներ և այլ փողային երաժշտական գործիքներ),

ե) ցանկացած տեսակի թմրանյութեր, թունավոր նյութեր կամ ստիմուլյատորներ,

զ) ծայրահեղ բնույթ կրող քարոզչական նյութեր,

է) նացիստական ատրիբուտիկա, խորհրդանշաններ կամ նացիստական ատրիբուտիկայի ու խորհրդանշանների հետ շփոթելու աստիճան նման նշաններ,

ը) տեխնիկական միջոցներ, որոնք կարող են խանգարել հանդիպման անցկացմանը կամ վերջինիս մասնակիցներին (լազերային սարքեր, լապտերներ և այլն), ձայնային ուժեղացման միջոցներ (բացառությամբ սույն կանոնակարգով հաստատված միջոցների), ռադիոկայաններ:

Հոդված 29. Պատասխանատվությունը

29.01. Սույն կանոնակարգի դրույթները խախտող կամ դրանց կատարումն իրականացնելուց հրաժարվող անձինք կարող են հեռացվել մարզադաշտից՝ առանց մուտքի տոմսերի արժեքի փոխհատուցման:

29.02. Խաղի կազմակերպիչը, կարգադրիչները կամ համապատասխան պետական մարմինների աշխատակիցները իրավունք ունեն հանդիսատեսից առգրավել առարկաներ, միայն այն դեպքերում, եթե նման իրավունքը սահմանված է ՀՀ կիրառելի և վերաբերելի օրենսդրությամբ:

29.03. Հանդիպման մեկնարկից առաջ հանդիսատեսից առգրավված առարկաները խաղից հետո պետք է վերադարձվեն իրենց տերերին առաջին իսկ պահանջի դեպքում՝ ոչ ուշ, քան նման պահանջ ներկայացնելուց մեկ ժամ հետո:

29.04. Խաղի կազմակերպիչն իրավունք ունի օրինախախտներից պահանջել նյութական վնասի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

29.05. ՀՀ օրենսդրության, ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կանոնակարգերի համաձայն՝ հանդիպման հանդիսատեսի գործողությունների արդյունքում պատասխանատվության ենթարկված ակումբը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այն հանդիսատեսի նկատմամբ, որի մեղքով պատճառվել է նյութական վնասը, ինչի մասին պետք է հատուկ նշում լինի տոմսի վրա:

Հոդված 30. Մուտքի մերժումը կամ հեռացումը

30.01. Խաղի կազմակերպիչը պետք է համագործակցի ոստիկանության հետ, որպեսզի երաշխավորվի հետևյալը՝

ա) սույն կանոնակարգով և այլ կիրառելի կանոնակարգերով սահմանված դեպքերում և կարգով մարզադաշտ մուտք գործելու մերժում ստացած կամ մարզադաշտից հեռացված ցանկացած անձ վերստին չստանա մուտքի թույլտվություն,

բ) սույն անձը ամբողջ խաղի ընթացքում մարզադաշտից գտնվի բավականաչափ հեռավորության վրա՝ առնվազն մինչև հանդիսատեսի հեռանալը,

գ) Ոստիկանությունը, ՀՖՖ-ն և ակումբները ժամանակին և մանրամասն պետք է տեղյակ պահեն միմյանց հանդիպումների անցկացման ժամանակ որևէ մարզադաշտում սույն կանոնակարգի դրույթները խախտած ֆիզիկական անձանց մասին:

ՄԱՍ IV - ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ

Հոդված 31. Ապահովության և անվտանգության աշխատակիցների ներկայությունը

31.01. Անվտանգության աշխատակիցները, առաջին օգնություն ցուցաբերողները, բժշկական անձնակազմը, ինչպես նաև մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգի հաղորդավարը/ները, պետք է հանդիսատեսների՝ մարզադաշտում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում և մինչև նրանց հեռանալը մնան մարզադաշտում և վերջինիս շրջակայքում՝ իրենց համար հատկացված տարածքում՝ համաձայն ոստիկանության կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուի հանձնարարականների:

Հոդված 32. Խմիչքների շրջանառությունը/վաճառքը

32.01. Խաղի կազմակերպիչը պետք է ապահովի, որ՝

ա) մարզադաշտի տարածքում վաճառվեն միայն մինչև 15% ալկոհոլ պարունակող խմիչքներ,

բ) բոլոր խմիչքները պետք է վաճառվեն և շրջանառվեն իրենցից վտանգ չներկայացնող թղթե կամ պլաստիկ բաց տարաներով:

Հոդված 33. Հանդիսատեսի շարժի սահմանափակումը

33.01. Անհրաժեշտության դեպքում խաղի կազմակերպիչը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի հանդիսատեսը չկարողանա տեղափոխվել մեկ սեկտորից մյուսը:

33.02. Եթե այնպես է, որ որոշակի սեկտորում գտնվում են տարբեր թիմերի աջակցող երկրպագուների խմբեր, ապա նրանք միմյանցից պետք է բաժանված լինեն անհաղթահարելի արգելագծով կամ կարգադրիչներով:

Հոդված 34. Հանրային անցուղիները

34.01. Խաղի կազմակերպիչը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի բոլոր հանրային անցուղիները, միջանցքները, աստիճանները, դռները, դարպասները և արտակարգ իրավիճակների ելքուղիները զերծ լինեն հանդիսատեսի ազատ հոսքը խանգարող ցանկացած խոչընդոտից:

Հոդված 35. Դռները և դարպասները

35.01. Խաղի կազմակերպիչը պետք է ապահովի հետևյալը.

ա) մարզադաշտի բոլոր ելքային դռները և դարպասները, ինչպես նաև հանդիսատեսի համար նախատեսված տարածքից խաղադաշտ տանող բոլոր դարպասները պետք է մնան բաց, քանի դեռ հանդիսատեսը գտնվում է մարզադաշտում,

բ) այդ դռներից և դարպասներից յուրաքանչյուրի մոտ միշտ պետք է լինի հատուկ նշանակված աշխատակից, ով ցույց կտա արտակարգ իրավիճակներում տարհանման ժամանակ նախատեսված ելքերը,

գ) այդ դռները կամ դարպասները ոչ մի դեպքում պետք է փակված չլինեն բանալիով:

Հոդված 36. Խաղային և տեխնիկական գոտիների պաշտպանությունը

36.01. Խաղի կազմակերպիչը պետք է երաշխավորի ֆուտբոլիստների և խաղի պաշտոնյաների ապահովագրվածությունը հանդիսատեսի խաղադաշտ և հարակից գոտի ներխուժումից: Այն կարող է իրականացվել տարբեր կերպ, օրինակ, կախված հանգամանքներից, կիրառելով ստորև նշված մեկ կամ մի քանի միջոցները՝

ա) խաղադաշտում կամ վերջինիս հարակից գոտու մոտ անվտանգության աշխատակիցների ներկայությունը,

բ) բավականաչափ լայնության և խորության փոսերը,

գ) նստատեղերի այնպիսի դասավորությունը, որտեղ հանդիսատեսի առջևի շարքը տեղակայված կլինի դաշտից բարձր, ինչի շնորհիվ հանդիսատեսի ներթափանցումը խաղադաշտ և հարակից գոտի կդառնա օբյեկտիվորեն անհնար,

դ) դժվարամատչելի թափանցիկ էկրանները կամ ցանկապատերը, որոնք կարող են տեղադրվել մշտատև կամ ժամանակավոր՝ կցվեն այնպես, որ հնարավոր լինի հեռացնել այն պահին, երբ տվյալ խաղի համար դրանց կարիքն այլևս չկա:

36.02. Անկախ ներխուժումից խուսափելու միջոցներից՝ պետք է նաև նախատեսվեն պատշաճ միջոցներ՝ հանդիսատեսին արտակարգ իրավիճակներում խաղադաշտ կամ հարակից գոտի մուտք գործելու հնարավորություն ընձեռելու համար, եթե տրիբունաների հետևում և/կամ կողքի հատվածներում չկան արտակարգ իրավիճակներում տարհանման համար նախատեսված համապատասխան միջոցներ, որոնք հնարավորություն կտան խաղադաշտն իր հարակից գոտով այդ նպատակով չօգտագործելու համար:

Հոդված 37. Դրվագի տեսակրկնության ցուցադրումը լուսատախտակին

37.01. Խաղի կազմակերպիչը կարող է խաղի դրվագի տեսակրկնությունները ցուցադրել մարզադաշտի լուսատախտակին միայն հետևյալ դեպքերում՝

ա) միայն ընդմիջման 15 րոպեանոց դադարի ընթացքում կամ լրացուցիչ ժամանակից առաջ տրված ընդմիջման ընթացքում,

բ) դրանք չպետք է իրենց մեջ պարունակեն որևիցե գործողություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կընդգծի մրցավարի թույլ տված հնարավոր սխալը, կամ արդար խաղի սկզբունքներին հակասող ցանկացած վարքագիծ,

գ) դրանք չպետք է ուղեկցվեն ձայնով:

37.02. Բացառությամբ սույն Հոդվածի 37.01 կետում նշված դեպքերից, մնացած դեպքերում որևէ խաղային դրվագի տեսակրկնության ցուցադրումը էլեկտրական լուսատախտակին արգելվում է:

Հոդված 38. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգը, հաղորդավարները և հայտարարությունները

38.01. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգը պետք է լինի այնպիսին, որ հստակ լսելի լինի մարզադաշտի ներսում և դրսում, մարդկանց աղմուկի մեջ, նույնիսկ հանդիսատեսի աղմուկի հանկարծակի բարձրացման դեպքում:

38.02. Մարզադաշտի ռադիոհանգուցային համակարգով հնչեցվող հայտարարությունները պետք է լինեն խիստ չեզոք: Այդ համակարգը չպետք է օգտագործվի՝

ա) քաղաքական բնույթի հաղորդագրությունների տարածման համար,

բ) հյուրընկալող թիմին աջակցելու համար,

գ)հյուր թիմի նկատմամբ ցանկացած ձևի խտրականության ցուցաբերման համար:

Հոդված 39. Քաղաքական ակցիաները

39.01. Քաղաքական հաղորդագրությունների կամ մարզադաշտի ներսում/մերձակայքում ցանկացած միջոցներով քաղաքական ակցիաների խթանումը կամ հայտարարությունը խստիվ արգելվում է խաղից առաջ, խաղի ընթացքում և դրանից հետո:

Հոդված 40. Սադրիչ գործողությունները և ռասիզմը

40.01. Խաղի կազմակերպիչը, ոստիկանության պաշտոնյայի կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուի հետ միասին, պետք է կանխի մարզադաշտի ներսում/մերձակայքում հանդիսատեսի կողմից իրականացվող ցանկացած սադրիչ գործողություն (ֆուտբոլիստների կամ հակառակորդ թիմի երկրպագուների հանդեպ անընդունելի չափի հասնող սադրիչ խոսքեր, ռասիստական վարքագիծ, սադրիչ պաստառներ կամ դրոշներ և այլն):

40.02. Նման գործողություն տեղի ունենալու դեպքում խաղի կազմակերպիչը, կարգադրիչները, ոստիկանության աշխատակիցները կամ անվտանգության պատասխանատուն պետք է միջամտեն և հեռացնեն բոլոր վիրավորական բնույթի նյութերը և իրերը:

40.03. Կարգադրիչները պետք է ոստիկանների ուշադրությունը հրավիրեն ցանկացած լուրջ կարգազանցությանը (ներառյալ՝ ռասիստական վիրավորանքներ), որպեսզի կարգազանցները հեռացվեն մարզադաշտից՝ ոստիկանութան կողմից նման որոշում կայացվելու դեպքում:

40.04. Խաղի կազմակերպիչը և մասնակից ակումբները պետք է իրագործեն և կիրառեն ՈՒԵՖԱ-ի ռասիզմի վերաբերյալ 10 կետից բաղկացած ծրագիրը (տե՛ս Հավելված 1):

Հոդված 41. Երկրպագուներին մարզադաշտում պահելը

41.01. Եթե ոստիկանության պաշտոնյան կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուն որոշում են, որ երկրպագուների որոշակի խումբ պետք է որոշ ժամանակ մնա մարզադաշտում մինչև մնացած երկրպագուների հեռանալը, ապա նրանք պետք է գործեն հետևյալ սկզբունքների պահանջների համաձայն.

ա) երկրպագուների որոշակի խմբի՝ մարզադաշտում պահելու որոշումը պետք է հայտարարվի ռադիոհանգուցային համակարգի միջոցով

բ) հայտարարությունը պետք է կրկնվի խաղի ավարտից անմիջապես առաջ

գ) խաղի կազմակերպիչը պետք է ապահովի, որպեսզի մարզադաշտում մնացած երկրպագուները կարողանան այդ ամբողջ ժամանակ օգտվել սննդից և սանիտարահիգիենիկ հարմարություններից

դ) նրանք պետք է պարբերաբար տեղեկացվեն, թե որքան ժամանակ դեռ պետք է սպասեն, մինչև իրենց կթույլատրվի մարզադաշտը լքելը:

ՄԱՍ V - ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42. Հավելվածը

42.01. Սույն կանոնակարգի Հավելվածը կազմում է դրա անբաժանելի մասը:

Հոդված 43. Կարգապահական ընթացակարգերը

43.01. Սույն կանոնակարգի դրույթների ցանկացած խախտումը կհանգեցնի ՀՖՖ-ի կողմից պատժամիջոցների կիրառման:

Հոդված 44. Կանոնակարգի ընդունումը և ուժի մեջ մտնելը

44.01. Սույն Կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 09.07.2021թ.-ին:

44.02. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՈՒԵՖԱ-Ի ՌԱՍԻԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10 ԿԵՏԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՊԼԱՆԸ

1. Հայտարարություն անել այն մասին, որ ռասիզմը կամ որևէ այլ խտրականություն կլինեն անհանդուրժելի՝ սահմանելով այն գործողությունը, որը կձեռնարկվի ռասիստական կոչեր անողների դեմ: Հայտարարությունը պետք է տպագրվի բոլոր խաղային ծրագրերում և մշտապես և ակնառու կերպով ցուցադրվի մարզադաշտի շրջակայքում:
2. Խաղի ժամանակ հանրությանն ուղղված ռասիստական կոչերը դատապարտող հայտարարություններ անել
3. Ռասիստական չարաշահումներին չմասնակցելու պարտադիր պայման դնել աբոնեմենտային տոմսատերերի առջև
4. Միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ռասիստական գրականության վաճառքը մարզադաշտի շուրջը և ներսում
5. Կարգապահական միջոցներ ձեռնարկել ռասայական չարաշահումներով զբաղվող ֆուտբոլիստների նկատմամբ
6. Կապվել այլ ասոցիացիաների կամ ակումբների հետ՝ համոզվելու համար, որ վերջիններս հասկանում են ռասիզմի վերաբերյալ իրենց որդեգրած քաղաքականությունը
7. Խրախուսել, որպեսզի կարգադրիչները և ոստիկաններն ունենան ռասիստական չարաշահումներով զբաղվող ընդհանուր մարտավարությունը:
8. Որպես հրատապ հարց՝ մարզադաշտից հեռացնել բոլոր ռասիստական գրառումները (գրաֆիտիները)
9. Որդեգրել հավասար հնարավորությունների քաղաքականություն՝ զբաղվածության և սպասարկման տեսանկյունից:
10. Աշխատել մնացած բոլոր խմբերի և գործակալությունների հետ (օրինակ՝ ֆուտբոլիստների միություն, երկրպագուներ, դպրոցներ, կամավորական կազմակերպություններ, երիտասարդական ակումբներ, հովանավորներ, տեղական ձեռնարկություններ, ոստիկանություն և այլ պետական ծառայություններ), որպեսզի մշակվեն ակտիվ ծրագրեր և ռասայական չարաշահումների ու խտրականության վերացման քարոզչության իրազեկության բարձրացման հարցում գրանցվի առաջընթաց:

ՀՖՖ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Էդգար Մանուկյան	ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի պետ
Խորեն Զարգարյան	ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի պետ
Վահան Բերակչյան	ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ
Արսեն Զաքարյան	ՀՖՖ Արտոնագրման բաժնի Մարզադաշտերի հարցերով պատասխանատու
Կարեն Մնացականյան	ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի պետ
Էդուարդ Մուրադյան	ՀՖՖ Իրավաբանական և ՄՌ բաժնի ավագ իրավաբան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌ. +374 11 88 88 08
ԷԼ. ՓՈՍՏ. LICENSING@FFA.AM
WWW.FFA.AM